



ԿԿՈՒ

Մանկապատանեկան Թերթիկ

ՓԵՏՐՈՒԱՐ Բ - 2024
Թիւ 5



Թիւ պատրաստեց՝
ՄԱՐԻՆԷ ԱՇՈՏԵՆ-ՇԱՀԻՆԵԱՆ
Նկարազարդեց՝
ՌԱՖԻ ԲԷՇԵՆԱՆ

Ս. ՎԱՐԴԱՆԱՆՔ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ

451 թուականի գարնան, պարսկական բանակը իր 300,000 զինուորներով մտաւ Հայաստանի Փայտակարան գաւառը: Պարսիկ հրամանատարը՝ Մուշկան, դիրք բռնեց Աւարայրի դաշտին մէջ Տղմուտ գետին եզերքը:

Քաջն Վարդան լաւ զինած էր իր բանակը: Ան խրախուսեց իր զօրքը: Բոլորին մէջ կը տիրէր ոգեւորութիւն մը, հոգիները բորբոքած էին հայրենիքի եւ կրօնքի պաշտպանութեան սուրբ գործին նուիրուելու ջերմեանդութեամբ:

Հայոց բանակին թիւն էր 66,000, զորս Վարդան բաժնեց երեք խումբերու:

Ճակատամարտը տեղի ունեցաւ 451 թ.-ի Մայիս 21-ին, հոգեգալստեան նախօրեակին:

Հայկական բանակը հերոսաբար կատարեց իր պարտականութիւնը եւ կռուեցաւ մինչեւ մահ: Վարդան Մամիկոնեան ուրջ հայ զօրավարներով եւ հայ բանակի աւելի քան երրորդ մասով ինկաւ պատերազմի դաշտին վրայ:

Մենք՝ հայերս, ամէն տարի կը տօնենք այս ճակատամարտին եւ Աւարայրի հերոսներուն յիշատակը, որ միշտ ուժ ներշնչած է մեզի փորձութեան եւ սուգի ժամանակ: Այս պատերազմը կը խորհրդանշէ ճգմուած, բայց վերջնականօրէն չպարտուած ժողովուրդի մը կամքն ու յոյսերը:

Պարսիկները թէւ յաղթական էին, բայց մեծապէս ցնցուած՝ ստիպուեցան կանգ առնել, իրենց կորուստները դարմանելու համար: Անոնք հրաժարեցան Հայաստանը կրակապաշտ դարձնելու ծրագիրէն:



ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆՂԱՆ

Բարեկենդան կը նշանակէ բարի կենդանութիւն կամ ուրախութեան օր:


Բուն Բարեկենդանը կը տօնենք Մեծ Պահքին նախորդող կիրակին:

Բարեկենդանը այնքան սիրուած, ժողովրդային, սպասուած տօն մըն է, որ հայ ազգին համար կը նկատուի երջանկաբեր, ճոխ խրախճանքներով ու առատ ուտելիքներով վայելելու տօն: Ինչպէս նաեւ պարելու, խաղալու, թատերախաղերու, այցելութիւններու եւ ուրախութեան առիթ:

Այս սովորութիւնը եկած է միջին դարերէն: Բարեկենդանի օրը մարդիկ իրաւունք ունին ծափուելու՝ ծածկելով իրենց դէմքը, որպէսզի ոչ ոք զիրենք ճանչնայ:


Ժամանակին այդ օրը փոքրիկները մեծերու կը վերածուէին, ծառաները՝ տերերու: Դերերը շրջուած էին:

Այդ օր բոլոր ծայրայեղութիւնները արտօնուած են, որովհետեւ անոնց պիտի յաջորդէն Մեծ Պահքի քառասուն օրերը: Այդ քառասուն օրերուն ընթացքին, վերյիշելով Յիսուսի անապատին մէջ անցուցած աղօթքի եւ պահքի քառասուն օրերը, քրիստոնեաները պահք կը պահեն:




Կրնա՞ս 5 սխալ գտնել այս պատկերին մեջ:



Լուցկիի երկու ցպիկ շարժելով, երեք եռանկյին կազմե՛լ:



Օգնե՛ սկիռիկին՝ ելքի ճամբան գտնելու, հաւաքելով ճամբուն վրայ հանդիպած ընկոյզները:



Կրնա՞ս երկու պատկերներուն միջև 8 տարբերութիւն գտնել:



ԲԱՐԵԿԵՆՂԱՆԸ

Յովհաննես Թումանյան

Ժամանակին մարդ մը ու կին մը կ'ապրէին: Այդ մարդն ու կինը գիրար չէին հաւներ: Մարդը կնոջ յիմար կ'ըսէր, կինն ալ՝ մարդուն: Ու միշտ կը կռուէին իրարու հետ:

Օր մըն ալ մարդը իւր ու բրինձ կ'առնէ, կու տայ մշակին շալակը, կը տանի տուն: Կինը կը բարկանայ.

- Երբ յիմար ես կ'ըսեմ, չես հաւատար, այսքան իւրն ու բրինձը մեկ անգամէն ինչո՞ւ բերած ես, հորդ համար հոգեճա՞շ պիտի տաս, թէ տղուդ հարսանիքը պիտի սարքես:

- Ի՛նչ հոգեճաշ, ի՛նչ հարսանիք, այ կնիկ, ի՛նչ կը խօսիս, տա՛ր, պահե՛, բարեկենդանի համար է:

Կինը կը հանգստանայ, կը տանի որ պահէ:

Որոշ ժամանակ կ'անցնի, այս կինը կը սպասէ ու կը սպասէ, բայց բարեկենդանը չի գար: Օր մըն ալ տան սեմին նստած պահուն, կը տեսնէ մարդ մը, որ փողոցէն աճապարանքով կ'անցնի: Կինը ձեռքը կը դնէ ճակատին ու ձայն կու տայ.

- Եղբայ՛ր, եղբայ՛ր, վայրկեան մը կեցի՛ր:

Մարդը կը կենայ:

- Եղբայ՛ր դուն բարեկենդանը չե՞ս:

Անցորդը կը նկատէ, որ այս կնոջ խելքը պակաս է, կը մտածէ. «Այդ ըսեմ, տեսեմ ինչ պիտի պատահի»:

- Այո՛, ես եմ բարեկենդանը, սիրելի՛ քոյրիկ, ի՛նչ ունիս ըսելիք:

- Ես պիտի ըսեի, որ մենք քու ծառաներդ չենք, որ քու իւրն ու բրինձը պահենք: Որքան որ պահեցիք հերիք չե՞... չե՞ս ամչնար... ինչո՞ւ չես գար քու ապրանքդ չես տանիր:

- Ինչո՞ւ կը նեղուիս, սիրելի՛ քոյրիկ, ես ալ ճի՛շդ ատոր համար եկած եմ, ձեր տունը կը փնտռէի ու չէի գտներ:

- Ուրեմն ա՛ն եւ տա՛ր եղբայր ու զիս հոգէն ազատէ՛:

Այս մարդը ներս կը մտնէ, կը շալկէ իւրն ու բրինձը ու կը մեկնի դէպի իրենց գիւղը:

Ամուսինը տուն կու գայ, կինը կ'ըսէ.

- Լսե՛, այդ բարեկենդանը եկաւ, խայտառակեցի զինք, իր ապրանքը տարաւ:

- Ի՛նչ բարեկենդան... ի՛նչ ապրանք...

- Այդ իւրն ու բրինձը: Յանկարծ տեսայ, որ վերի կողմէն կու գայ, մեր տունը կը փնտռէ. կանչեցի, լաւ մը խայտառակ ըրի, շալակը տուի ապրանքը, տարաւ:

- Վա՛յ, անխելք, վա՛յ, երբ կ'ըսեմ յիմար ես իսկապէս յիմար ես եղեր...

- Ո՞ր կողմ գնաց:

- Այդ կողմը:

Մարդը ձին կը հեծնէ, կ'իյնայ բարեկենդանին ետեւէն: Ճանապարհին բարեկենդանը ետ կը նայի, կը տեսնէ որ ձիաւոր մը կու գայ: Կը մտածէ, որ ձիաւորը այդ կնոջ ամուսինը ըլլալու է:

Մարդը կու գայ եւ կը հասնի իրեն:

- Բարի օր, եղբայ՛ր:

- Աստուծոյ բարին:

- Արդեօք այս ճամբէն մարդ անցա՞ւ:

- Անցաւ:

- Ի՞նչ ունէր շալակին:

- Իւր ու բրինձ:

- Հա՛, ճիշդ այդ կ'ըսեմ:

Ե՞րբ անցաւ:

- Բաւական եղաւ:

- Եթէ ձիով երթա՞մ, կը հասնի՞մ:

- Ինչպե՞ս պիտի

հասնիս, երբ դուն ձիով ես, իսկ ան՝ ոտքով: Մինչեւ քու ձիդ չորս ոտքը փոխէ մե՛կ, երկո՛ւ, երե՛ք, չո՛րս, ան իր երկու ոտքով, մե՛կ-երկո՛ւ, մե՛կ-երկո՛ւ, շուտ-շուտ կ'երթայ, կ'անցնի:

- Ուրեմն ի՛նչ ընեմ:

- Ի՛նչ պիտի ընես, կ'ուզես ձիդ քովս ձգէ, դուն ալ ոտքով վազէ, թերեւս հասնիս:

- Հա՛, շատ ճիշդ կ'ըսես:

Ոտքը գետին կը դնէ, ձին կը ձգէ անոր քով ու ոտքով ճանապարհ կ'իյնայ:

Մարդը հագի կը հեռանայ բարեկենդանը իւրն ու բրինձը կը դնէ ձիուն վրայ, ճամբան կը փոխէ ու կը քշէ: Մարդը ոտքով կ'երթայ ու կ'երթայ, բայց կը տեսնէ թէ չի հասնիր, ետ կը դառնայ, կը տեսնէ ձին ալ չկայ: Տուն կու գայ: Դարձեալ այր ու կին կը սկսին կռուիլ, մարդը՝ իւրին ու բրինձին համար, կինը՝ ձիուն:

Մինչեւ այսօր ալ այդ մարդն ու կինը կը կռուին. մարդը կնոջ յիմար կ'ըսէ, կինն ալ՝ մարդուն, իսկ բարեկենդանը կը լսէ ու կը ծիծաղի:



ԻՆՉՈ՞Ւ ԸՐԵԻԸ ԴԵՂԻՆ Է

Իրականության մեջ արելը ճերմակ է: Աստղանաւորները կրնան հաստատել ասիկա, երբ անոնք մթնոլորտէն անդին կ'անցնին, արելը դեղին չ'երեւիր, այլ՝ ճերմակ: Իսկ մենք արելը դեղին կը տեսնենք, որովհետեւ այս գոյնը կը յառաջանայ, երբ բոլոր գոյները, (բացի՝ կապոյտէն, որ երկինքին մէջ կը սփռուի), իրարու կը խառնուին:

ԻՍԿ ԻՆՉՈ՞Ւ ԵՐԿԻՆՔԸ ԿԱՊՈՅՏ Է

Երկինքը երբեմն մոխրագոյն կ'ըլլայ, երբեմն ճերմակ եւ երբեմն նոյնիսկ սեւ: Սակայն, երբ ամպերը կը հեռանան, անիկա կապոյտ գոյն մը կը ստանայ: Եթէ դուն օդանաւով ճամբորդած ես, վստահաբար նշմարած ես, որ երբ ամպերու խաւէն վեր կը բարձրանաս, երկինքը կապոյտ կ'երեւի:

ՈՒՐԿԵ՞ ԿՈՒ ԳԱՅ ԱՅՍ ԳՈՅՆԸ

Երկրագունդը լուսաւորող լոյսը արելէն կու գայ: Այս լոյսը ճառագայթում մըն է, որ կազմուած է ծիածանին եօթը գոյներէն՝ կարմիր, նարնջագոյն, դեղին, կանաչ, կապոյտ, մուգ կապոյտ եւ մանիշակագոյն: Այս բոլոր գոյներուն խառնուրդը մեզի ճերմակ լոյս մը կու տայ:

Ըստ իրենց գոյներուն, ճառագայթները աւելի դիւրութեամբ կամ դժուարութեամբ կը թափանցեն մեր մոլորակը շրջապատող օդի խաւին մթնոլորտը: Տաք գոյները, այսինքն՝ կարմիրը, նարնջագոյնը, դեղինը եւ կանաչը աւելի դիւրութեամբ կը թափանցեն երկրագունդին մթնոլորտը: Ապա անոնք «կը ծծուին» երկրագունդին կողմէ: Յետեւաբար մենք զանոնք չենք տեսներ:

Մինչ պաղ գոյները, այսինքն՝ կապոյտը եւ մանիշակագոյնը նուազ դիւրութեամբ կը թափանցեն օդին մէջ: Անոնք մթնոլորտին մէջ կը սփռուին գետին հասնելէն առաջ: Այս պատճառով է, որ մենք երկինքը կապոյտ կը տեսնենք:

